ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Նախագծային ուսուցումը՝ հայոց լեզվի և գրականության դասաժամերին

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիրվարդ Թավադյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Վաղատուրի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Կամոյի Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ 4

2. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ 6

2.1. Նախագծային գործունեության հիմնական փուլերը 7

2.2. Նախագծային աշխատանքի օրինակ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախագծային ուսուցման ներդրումը հայոց լեզվի և գրականության դասերին մանկավարժական մոտեցումներում որոշակի տեղաշարժերի արդյունք է: Այս նորարարական մոտեցումն առաջարկում է ուսուցման բազմակողմանի փորձ, որը դուրս է գալիս ավանդական կրթական պատկերացումների սահմաններից և խրախուսում է ուսանողներին ակտիվորեն մասնակցել առարկայի կամ առարկայախմբի տիրույթում իրականացվող գործողությունների՝ տեսական գիտելիքը զուգակցելով գործնական, իրավիճակային, հետազոտական աշխատանքներով: Սովորողներին գործնական նախագծերում ներգրավելով՝ նրանց հնարավորություն է տրվում զարգացնելու քննադատական մտածողություն, խնդիրներ լուծելու և հաղորդակցման հմտություններ, որոնք կարևոր են գիտելիքների հաղորդման, հմտությունների, դիրքորոշումների և արժեքային համակարգի ձևավորման, այլ խոսքով՝ անձնական աճի համար:

Նկատի ունենալով վերոշարադրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հանրակրթության ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում առանձնահատուկ կարևորվել է նախագծային ուսուցումը՝ սույն հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է հարցի շուրջ մանկավարժների շրջանում հնարավոր անորոշությունը ցրելու անհրաժեշտությամբ:

Հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել հայոց լեզվի և գրականության դասերին նախագծային ուսուցման իրականացման հնարավորությունը:

Խնդիրներն են՝

- սահմանել նախագծային մեթոդի էությունը, առավելություններն ու թերությունները,
- ուսումնասիրել հայոց լեզվի և գրականության դասաժամերին նախագծային գործունեության կազմակերպման եղանակները,
- Ակ. Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի օրինակով ներկայացնել նախագծային ուսուցման հիմնական փուլերը:

Հետազոտության **օբյեկտը** նախագծային ուսուցումն է, իսկ **առարկան՝** հայոց լեզվի և գրականության դասերին նախագծային ուսուցման մեթոդի օգտագործումը:

Հետազոտությունն իրականացվել է տեսական գրականության և փաստաթղթերի վերլուծության, ինչպես նաև դիտման և բովանդակային վերլուծության **մեթոդների** օգնությամբ:

1. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նախագծերի մեթոդը որևէ հիմնախնդրի մանրամասն մշակմամբ ուսուցման նպատակներին հասնելու եղանակ է, ընդսմին մշակումը պետք է ավարտվի շոշափելի պրակտիկ արդյունքով: Այն որոշակի հաջորդականությամբ իրականացվող հնարների, գործողությունների համախումբ է, միտված դրված նպատակի իրականացմանը:

Նախագծերի մեթոդը ուսուցման այնպիսի եղանակ է, որի դեպքում սովորողն անմիջականորեն ներառվում է ակտիվ իմացական գործընթացների մեջ, նա ինքնուրույնաբար ձևակերպում է իր խնդիրը, իրականացնում է անհրաժեշտ տեղեկույթի հավաքագրում, պլանավորում է խնդրի լուծման տարբերակներ, եզրակացություններ է անում, վերլուծում է սեփական գործունեությունը և արդյունքում ձեռք բերում նոր գիտելիքներ ու կենսափորձ: Մեթոդը կարելի է կիրառել ուսուցման ցանկացած փուլում, տարբեր տարիքային խմբերում: Այն հարմար է բոլոր ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս և նշալ պատճառներուվ այն համապիտանի մեթոդ է:

Մանկավարժության մեջ նախագծերի մեթոդը ստեղծվել է 20-րդ դարի սկզբին: Այն կոչվել է նաև պրոբլեմների մեթոդ և կապված է ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուիի գաղափարների հետ: Վերջինս գտնում էր որ, դպրոցը պետք է կազմակերպի սովորողների ակտիվ և նպատակամետ ուսումնական գործունեություն, հաշվի առնելով նրանց անհատական հետաքրքրությունները: Երեխաները պետք է գիտակցեն, որ իրենց ձեռք բերած գիտելիքները պետք են գալու կյանքում: Այս բանը նրանց հասկանալի դարձնելու համար պետք է լուծվելիք պրոբլեմներն ընտրել իրական կյանքից, այնպիսիք, որոնք ծանոթ են երեխաներին և նշանակություն ունեն նրանց համար:

Նախագծերի մեթոդն այսօր որոշակի փոփոխություններ է կրել և որոշ չափով հեռացել է Դյուիի պրագմատիկ մոտեցումից, սակայն էությունը մնացել է նույնը, խթանել սովորողների հետաքրքրությունը որոշակի պրոբլեմների հանդեպ և նախագծային գործունեությամբ լուծել այդ պրոբլեմները, ձևավորել պրակտիկայում գիտելիքները կիրառելու կարողություններ, զարգացնել քննադատական մտածողությունը:

Նախագծերի մեթոդը միշտ ենթադրում է ինչ-որ հիմնախնդրի լուծում: Այն մի կողմից ենթադրում է ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառում, մյուս կողմից՝ տարբեր բնագավառներից ձեռք բերած գիտելիքների ստեղծագործական կիրառում, ասել է թե՝ միջառարկայական գիտելիքների ու կապերի ակտիվ օգտագործում:

Ուսուցման այս տեխնոլոգիան, սակայն, զերծ չէ թերություններից: Համաշխարհային և հատկապես Խորհրդային միության փորձը ցույց է տվել, որ այն հնարավորություն չի տալիս սովորողներին համակարգված գիտելիքներ ձեռք բերել կոնկրետ առարկաներից: Հենց այս պատճառով էր, որ Խորհրդային միությունում այն առանձնապես չկարևորվեց ու համարյա թե մոռացության մատնվեց: Այս պարագան պետք է նկատի ունենալ և նախագծերի մեթոդը չդիտել որպես այլընտրանք ուսուցման մնացյալ մեթոդների: Այն ընդամենը սովորողներին անհրաժեշտ մի շարք ինտելեկտուալ ու անձնային որակներ ձևավորող ու զարգացնող լրացուցիչ մեթոդ է:

Մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին հնարավորություն տալ պրակտիկ խնդիրների կամ պրոբլեմների լուծման պրոցեսում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ: Ուսուցչին այս գործում հատկացվում է նախագիծը մշակողի, կոորդինատորի, խորհրդատուի և փորձագետի դերերը: Նախագծերը կարող են լինել անհատական, խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջին դեպքում աշխատանքը կազմակերպվում է համացանցի միջոցով:

2. **ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ**

Ինչպես կազմակերպել նախագծային գործունեությունը հայոց լեզվի և գրականության դասաժամերին.

1. Սկսել թեմայի ընտրությունից, նրա տիպից ու սովորողների քանակից:
2. Նշված թեմայում ուսուցիչը պետք է մտածի հնարավոր պրոբլեմները և օգնի սովորողներին ձևակերպել դրանք:
3. Խնդիրները բաշխի՝ ըստ խմբերի, քննարկի հետազոտման հնարավոր մեթոդների հարցը, տեղեկույթի որոնման, ստեղծագործական լուծումների հարցերը:
4. Ապահովի նախագծի մասնակիցների ինքնուրույն կամ խմբային աշխատանքը:
5. Իրականացնի ստացված տվյալների միջանկյալ քննարկումներ դասերի ժամանակ կամ գրադարանում:
6. Կազմակերպի նախագծի պաշտպանությունը, ընդդիմախոսությունը:
7. Կազմակերպի կոլեկտիվ քննարկում, փորձաքննություն՝ արդյունքների արտաքին գնահատման և եզրակացությունների համար:

Նախագծային աշխատանքները լավ հնարավորություն են տալիս վերահսկել սովորողների վարքն ու մտավոր գործունեությունը, բազմակողմանիորեն ճանաչել նրանց, քանի որ հաջողված ինքնուրույն ստեղծագործական որոնումը գիտելիքների խոր յուրացման և անձի ստեղծագործական զարգացման ցուցանիշ է: Այստեղ գիտելիքները դրսևորվում են ոչ ստանդարտ, նոր իրադրություններում և սովորողներն օգտագործում են տարբեր կրթական բնագավառներից իրենց ձեռք բերած գիտելիքները: Նման գործունեության մեջ դրսևորվում է ուսումնական աշխատանքի հանդեպ սովորողների անձնային վերաբերմունքի մակարդակը, դրսևորվում են թիմով աշխատելու կարողությունները,աշխատանքի որակի համար իր վրա պատասխանատվություն վերցնելու կամքը: Երեխաները դրսևորում են նախաձեռնություն և ինքնուրույնություն, նրանք սկսում են կայանալ որպես անձ, ընդունակ կյանքում ակտիվ գործունեության:

Նախագծային ուսուցման ժամանակ արդյունավետ է այն ուսուցչի աշխատանքը, որն անընդհատ սովորում, փնտրում, փորձարկում է նոր վարժություններ, որոնք այսօրվա սովորողի մեջ հետաքրքրություն են առաջացնում թեմայի, գրքի, ուսումնական գործընթացի նկատմամբ: Արդյունավետ դասավանդման համար ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայական գիտելիքի խոր իմացություն, այլև ուսուցման և ուսումնառության կենսագործմանն ուղղված

եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողունակություն, ընդ որում՝ նոր չափորոշչային պահանջ է յուրացված գիտելիքների արդյունավետ ու նպատակային կիրառման կարողունակությունը:

Անպայման պետք է նշել տեղեկատվական, հաղորդակցական միջոցների բազմազանությունն ու կիրառության դաշտի ընդլայնումը:

Ստեղծագործ ուսուցիչը չպետք է լինի «բոլոր տեղեկությունների և գիտելիքի աղբյուր», նա պետք է մնա գրեթե աննկատ և ղեկավարի աշակերտների աշխատանքն անուղղակի կերպով, պիտի վարպետորեն ուղղորդի իր աշակերտներին՝ նրանց տարիքային հետաքրքրասիրությունը դարձնելով ուսումնական հետաքրքրվածություն:

2.1. Նախագծային գործունեության հիմնական փուլերը

Նախագծի աշխատանքային գործընթացը՝

ա) թեմաներ ընտրելը և դրանք քննարկելը,

բ) ենթաթեմաներ ընտրելը և հանձնարարելը (կազմակերպվում է ուսուցչի կողմից կամ ընդհանուր համաձայնությամբ),

գ) հաղորդակցման ուղիներ ընտրելը (էլ. փոստ, ֆորում),

դ) հաղորդակցման ռազմավարություն մշակելը (տեղեկությունների փոխանցման պարբերականությունը, աշակերտներին հանձնարարված մասերի վերաբերյալ զեկույցների ստուգման վերջնաժամկետները),

ե) խմբերում փոքր թեմաները քննարկելը և ներկայացնելը,

զ) ներկայացումներն ըստ խմբերի պատրաստելը, փոքր թեմաների մասին զեկույցներն «իրար միացնելը»,

է) խմբերի ներկայացումները,

ը) դիտողությունները, գնահատումը. *գնահատում խմբերում՝* աշակերտներին հանձնարարված թեմայի մասերը:

Հետաքրքիր նախագծային աշխատանքներ են կազմակերպվում վեպերի (պատմավեպերի) ուսուցման ժամանակ: Ուսուցչի ուղղորդմամբ կամ հանձնարարությամբ աշակերտները կարող են դիտարկումներ կատարել գրողի ապրած և ներկայացրած դարաշրջանների, գրական թեմայի և դիպաշարի կառուցվածքի, երկի մեջ արծարծված բազմաթիվ թեմաների արդիականության, հերոսների տիպականության, տեղանունների, թեմային առնչվող մշակութային արժեքների՝ կտավների, ֆիլմերի, երգերի և այլի մասին: Նման լայնածավալ աշխատանքի իրականացման համար երբեմն անհրաժեշտ է լինում նաև կազմակերպել արտադպրոցական, արտադասարանային հանդիպումներ, ճանաչողական և

հետազոտական արշավներ ու էքսկուրսիաներ, որոնք միմիայն դրական ազդեցություն են ունենում սովորողների հայրենագիտական և ինքնաճանաչողական գիտակցության վրա, բացահայտում և ամրապնդում են միջառարկայական կապերն ու առնչությունները, աշակերտները որոնում, գտնում ու բացահայտումներ են կատարում՝ ինքնուրույն միջոցներ գտնելով սովորելու և համակարգելով ուսումնասիրվող թեմայի գիտակցված յուրացումը:

Դիտարկենք դրանցից մեկը՝ *նախագծային ստեղծագործական-հետազոտական մեթոդը:*

Այս մեթոդը կարելի է համարել տարաբնույթ աշխատանքների ամբողջականություն, գիտելիքների և կարողությունների գործնական կիրառություն, վերլուծություն և գնահատում:

Մեթոդի կազմակերպման և իրագործման ընթացքում ուսումնառողներն ավելի ընդգրկուն են մասնակցում աշխատանքի պլանավորմանը, վերահսկողությանը, վերլուծությանը, ինչու ոչ, նաև արդյունքների գնահատմանը:

Նախագծային աշխատանքի ընթացքում կարելի է կիրառել մանկավարժական զանազան մեթոդներ, իսկ աշխատանքի ուսումնասիրության, առաջադրվող խնդիրների լուծման համար՝ ինքնաստեղծ հնարներ ու միջոցներ:

Նախագծային աշխատանքի գործընթացն ուսուցանողին և ուսումնառողին տալիս է անսահմանափակ հնարավորություն, ստեղծում ազատ դաշտ երկուստեք (սովորող-սովորեցնող) պլանավորած աշխատանքն իրականացնելու համար:

Նախագծային ստեղծագործական-հետազոտական մեթոդի կիրառմամբ ուսուցման առաջնային արժեք է համարվում ոչ միայն ակնկալվող արդյունքները, այլև՝ գործընթացն ինքնին:

Նախագծային աշխատանքը կարող է լինել անհատական կամ ամբողջ խմբի սովորողների համատեղ, համակարգված գործողությունների արդյունքում:

Այն կարելի է կազմակերպել և իրականացնել մեկառարկայական, միջառարկայական կամ արտառարկայական ձևաչափերով:

Տևողությունը որոշվում է՝ ելնելով ընտրված թեմայից, առաջադրված նպատակներից: Կարևոր է, որ նպատակները լինեն հստակ և իրագործելի:

Նպատակներն իրականացնելիս կարևոր է խնդիրների առաջքաշմամբ լուծման ուղիների իրականացման գործընթացը: Այսինքն՝ կարևորվում է խնդրի առկայությունը, որը պետք է լուծել նախագծի վրա աշխատելու ընթացքում, ընդ որում խնդիրը նախագծի հեղինակի համար պետք է ունենա անհատական

կարևոր բնույթ և ուղղորդիչ դառնա լուծումներ որոնելու հարցում, ինչը դառնում է նախագծի խնդրի լուծման արդյունք:

Այսպիսով՝ խնդրի հստակեցումը, նպատակի ձևակերպումը և նախագծի արդյունքի ամբողջական նկարագրի ստեղծումը նախագծի առաջին բնորոշ առանձնահատկություններից մեկն է:

Աշխատանքի բովանդակությունը և փուլերը	**Գործունեությունը**	
	Ուսուցանողի	**Ուսումնառողի**
I փուլ **Նախապատրաստական**	Կազմել խումբ: Առաջադրել թեմաների ցանկ: Սովորողներին ներկայացվում է նախագծային աշխատանքի իրականացման և մոտեցման բովանդակության մասին: Թվարկվում կատարվող աշխատանքի տեսակները, դրանց արդյունքները և գնահատման չափանիշները:	Կազմվում են խումբ: Ընտրվում առաջարկվող թեմաներից մեկը: Միասնական քննարկման արդյունքում կազմվում և ուսուցչին տրվում է իրագործվող աշխատանքին վերաբերող նախնական հարցեր:
II փուլ **Պրոբլեմ /հիմնահարց/**	Ուսուցիչն առաջարկում է թեմայի հիմնակահարցը, ձևակերպում է նպատակն ու խնդիրները:	Սովորողներն արդեն ստացած հարցերի պատասխանները վերլուծելով՝ փորձում են հասկանալ և ընկալել առաջադրվող պրոբլեմը, կոնկրետացնում են նպատակները, այն իրագործելու խնդիրները:
III փուլ ***Հետազոտություն***	Ուսուցիչը դառնում է աշխատանքի անուղղակի ղեկավարը: Օգնում ու աջակցում է տեղեկատվական աղբյուրների որոնման հարցում: Բացատրում՝ ինչպես տարբերակել իսկական տեղեկատվությունը, ապատեղեկատվությունից, տալիս ցանկ որոնման աղբյուրների վերաբերյալ:	Կատարում են հետազոտություններ: Հավաքագրում են տեղեկատվություն՝ յուրաքանչյուրն իրեն բաժին հասած բնագավառի վերաբերյալ: Լուծում են միջանկյալ խնդիրներ:

IV փուլ *Տեղեկատվության վերլուծություն, եզրակացությունների ձևակերպում*	Համակարգում է ամբողջ գործընթացը: Ապահովում հետադարձ կապ:	Վերլուծում հավաքագրած տեղեկատվությունը, ձևակերպում եզրակացությունները:
V փուլ *Աշխատանքի կատարում*	Ուսուցիչը հանդես է գալիս որպես լսող, ուղղում նպատակաուղղված հարցեր, խրախուսում՝ հաշվի առնելով կատարած արդեն ամփոփ աշխատանքների արդյունքը:	Աշակերտներն արդեն ամփոփ աշխատանքի մեջ կատարում են որոշակի շտկումներ: Նախապատրաստվում պաշտպանության:
VI փուլ *Արդյունքների ամփոփում*	Գնահատվում է խնդրի լուծման ամբողջականությունը, խմբերի աշխատանքի ռազմավարությունը, աշակերտների ջանքերը, սկզբնաղբյուրների օգտագործման որակը, ստեղծագործական մոտեցումը, աշխատանքի շարունակման հնարավորությունները, հաշվետվության որակը:	Ներկայացնում են կատարած աշխատանքի հաշվետվությունը՝ գրավոր (ռեֆերատ) և բանավոր (պրեզենտացիա): Կոլեկտիվ քննարկման միջոցով ներկայացնում, պաշտպանում աշխատանքը: Հետևում գնահատման ընթացքին, արտահայտում սեփական կարծիքը գահատված արդյունքի վերաբերյալ:

Սյունակ 1-ին. նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար

2.2. Նախագծային աշխատանքի օրինակ

«Գրականություն» առարկա, 7- րդ դասարան

Ակ. Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը

Աշխատանքը կազմելիս հաշվի է առնվել հանրակրթական դպրոցի առարկայական նոր չափորոշչային պահանջները:

Թեմայի նպատակներն ու խնդիրները

- Տեքստի ընկալում. պատկերացում տալ տեքստում պատկերված իրադարձությունների և ժամանակաշրջանի մասին:
- Տեքստի ուսումնասիրում. ձևավորել գիտելիքներ կենսագրության, ապրած ժամանակաշրջանի ազդեցության, տեքստի բառապաշարի, ոճի, կոնֆլիկտի, կերպարների մասին:

- Տեքստի ստեղծում. նպաստել ստացած գիտելիքը հետազոտական տարաբնույթ աշխատանքի և ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ներկայացնելուն:

Վերջնարդյունքներ

- Բացատրի՝ ինչ կապ են արտահայտվում տեքստում պատկերած իրադարձությունները, միջավայրը, բառապաշարը և լեզվական առանձնահատկությունները:
- Բացահայտի տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը:
- Մատնանշի գրական-գեղարվեստական կերպարի դերը, կերպարակերտման առանձնահատկությունները տեքստում:

Առաջարկվող գործունեության ձևեր

- Դուրս գրել անծանոթ և բարբառային արժեք ունեցող բառերը, կազմել ցանկ՝ ներկյացնելով գրական համարժեք ձևերն ու տալ այդ բառերի բացատրությունները:
- Նկարահանել փոքրիկ ռեպորտաժ՝ զրույցի միջոցով բացահայտել ու վեր հանել գրողի ապրած ժամանակաշրջանն ու ստեղծագործության հետ նկատելի, առնչություն ունեցող կապը:
- Մեկնաբանել դեպքերի կատարման ժամանակաշրջանը, անդրադառնալ պատմական իրադարձությանը, գտնել լրացուցիչ նյութեր տվյալ ժամանակաշրջանի, աշխարհագրական վայրի մասին:

Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ

- *Անհատական և մշակութային արժեհամակարգ.* գրողի օգտագործած բառապաշարը, գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները, ստեղծագործության գաղափարը:
- *Ժամանակ և տարածություն.* գրողի կենսագրությունը, տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:

Միջառարկայական կապեր

- *Հայոց լեզու:* Կատարել բարբառային բառերի փոխադրում գրական համարժեքով: Գրական տեքստի մի հատված ներկայացնել բարբառային տարբերակով:
- *Պատմություն:* Պատմվածքում նշվող պատմական իրադարձության վերաբերյալ դեպքերի ուսումնասիրություն:
- *Աշխարհագրություն:* Պատմվածքում նշվող վայրերի քարտեզագրում: Փոքրիկ տեսաֆիլմի նկարահանում:
- *Արվեստ և ազգագրություն:* Նոթատետրերի շապիկների պատկերազարդում՝ ըստ պատմվածքում արծարծվող թեմայի ու նկարագրության: Պատմվածքում նկարագրվող տարածաշրջանում պահպանված ավանդազրույցների և ազգային

հետաքրքիր, արդեն մոռացված ուտեստներից մի քանիսի բաղադրատոմսերի հավաքագրում:

Աշխատանքի կատարման ժամանակահատվածը 2 ամիս:

Թեմայի տրոհում ենթաթեմաների

1. 8 հոգանոց խմբի ձևավորում:
2. Տեղեկության հավաքագրում:
3. Տեղեկությունների քննարկում, մշակում:
4. Թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում:
5. Հետազոտական աշխատանքի հաշվետվության նախապատրաստում:
6. Նախագծային աշխատանքի պաշտպանություն:
7. Արդյունքների ամփոփում:

Կառուցվածքի 6 փուլերը

1-ին փուլ-նախապատրաստում - (1 շաբաթ)

• **Ուսուցանողի գործունեությունը**: Առաջարկում է ընթերցել հեղինակի պատմվածքներից մի քանիսը: Մանրամասնորեն բացատրում է կատարվող աշխատանքի կառուցվածքը՝ ընթացքը, ժամնակահատվածը, խմբային աշխատանք կատարելու էթիկան, մեկ գլխավոր գաղափարի շուրջ միասնական աշխատանքի սկզբբունքայնությունը:

• **Ուսումնառողների գործունեությունը**: Աշակերտները առաջարկվող պատմվածքներից ընտրում են մեկը: Լսում կատարվող աշխատանքի վերաբերյալ ուսուցչի բացատրությունները: Կատարում քննարկում՝ վերհանելով աշխատանքի հետ կապված անհասկանալի թվացող, ենթադրելի խնդիրների վերաբերյալ հարցադրումներ:

2-րդ փուլ-պրոբլեմ /հիմնահարց/-(1 շաբաթ)

• **Ուսուցանողի գործունեությունը:** Ներկայացվում է նախագծի հիմնահարցը: Խումբը բաժանում է 4 ենթախմբի: Ըստ առաջադրված նպատակների ու խնդիրների՝ նրանց միջև կատարում աշխատանքի բաժանում:

• **Ուսումնառողների գործունեությունը:** Աշակերտները ստանում են հանձնարարություններ: Յուրաքանչյուր զույգ մշակում է իր աշխատանքի քայլաշարը, կատարում դերաբաժանում:

3-րդ փուլ-հետազոտություն -(3 շաբաթ)

• **Ուսուցանողի գործունեությունը:** Ուսուցիչը հետևում է խմբերի կատարած աշխատանքներին: Ուղղություն տալիս ուսումնասիրվող աղբյուրների վերաբերյալ:

• **Ուսումնառողների գործունեությունը:** Աշակերտները, ըստ խմբերի, կատարում են իրենց առաջադրված հետազոտական աշխատանքները:

<u>Խումբ 1-ին</u> - Դո՛ւրս գրել պատմվածքում հանդիպող անծանոթ և բարբառային բառերը, գտնե՛լ վերջիններիս գրական համարժեք բառերը: Կատարե՛լ տվյալ բառերի ծագումնաբանական ուսումնասիրություններ (բնիկ, փոխառյալ և այլն): Անդրադառնալ պատմվածքում նշվող պատմական իրադարձությանը:

<u>Խումբ 2</u> - Գտնե՛լ տեղեկություններ պատմվածքում հանդիպող վայրերի մասին: Նյութերը հավաքագրել՝ կապ հաստատելով տեղաբնակների հետ (կարելի է նաև տեսակապով): Կատարել քարտեզագրում: Նկարահանե՛լ փոքրիկ տեսաֆիլմ:

<u>Խումբ 3</u> **-** Հավաքագրե՛լ ավանդազրույցներ Գորիսի բնաշխարհի և մարդկանց մասին: Անդրադառնա՛լ տարածաշրջանի ավանադական խոհանոցին: Խմբում նկարելու ձիրք ունեցող աշակերտները նկարազարդեն նոթատետրերի շապիկներ՝ ըստ պատմավածքի խորհրդանիշ պատկերների:

4-րդ փուլ-տեղակատվության վերլուծություն, եզրակացությունների ձևակերպում -(1 շաբաթ)

• **Ուսուցանողի գործունեությունը:** Ուսուցիչը հետևում է կատարվող աշխատանքին: Տալիս է ուղղություններ ու նոր գիտելիքներ:

• **Ուսումնառողների գործունեությունը:** Աշակերտները, ըստ հավաքած նյութերի և կատարած ուսումնասիրությունների, անդրադառնում են պատմվածքի բովանդակային առանձնահատկություններին, վերհանում և իմաստավորում գլխավոր ասելիքը, բարոյադաստիարակչական կարևոր եզրակացություններն ու գաղափարական առաձնահատկությունները, ընդգծում հերոսների կերպարային բնութագրումները:

5-րդ փուլ-աշխատանքի կատարում -(1 շաբաթ)

• **Ուսուցանողի գործունեությունը:** Ուսուցիչը կատարում է դիտարկումներ, աշակերտներին օգնում խորհուրդներով՝ նրանց նախապատրաստելով նախագծի պաշտպանությանը:

• **Ուսումնառողների գործունեությունը:** Աշակերտները վերլուծում են կատարած աշխատանքները, կատարում որոշակի ուղղումներ ու շտկումներ, վերանայում կատարած աշխատանքը:

6-րդ փուլ-արդյունքների ամփոփում -(1 շաբաթ)

• **Ուսուցանողի գործունեությունը:** Ուսուցիչը դիտում և լսում է կատարված վերջնական աշխատանքը: Տալիս մանրամասն վերլուծություն, գնահատում նախ զույգերով աշխատանքի արդյունքը, ապա՝ յուրաքանչյուրին անհատապես:

• **Ուսումնառողների գործունեությունը:** Աշակերտները գրավոր (ռեֆերատի տեսքով) և բանավոր (պրեզենտացիայի միջոցով) ներկայացնում են կատարած աշխատանքը, մասնակցում արդյունքների վերլուծությանը:

Անուն-ազգանուն	**Գերազանց**	**Լավ**	**Բավարար**
	Հետազոտական աշխատանքը կատարվել էր մանրամասնորեն՝ ուշադրություն դարձնելով ստեղծագործական կարողությունների առկայությանը, կատարած ուսումնասիրությունների աղբյուրների բազմազանությանը, ճշգրտությանը: Թիմում աշխատանքը բաժանվել էր հավասարապես, աշխատել էին բոլորը: Լսարանի կողմից հնչեցրած հարցերին տրվում էին հստակ ու դիպուկ պատասխաններ: Թեմայի առաջ քաշած նպատակներն ու խնդիրներն իրագործվեց ամբողջովին:	Աշխատանքը ներկայացնելու համար ընտրված էր հետաքրքիր ձևաչափ: Ուսումնասիրման աղբյուրները քիչ էին, ոչ բոլորն էին ճշգրտված: Աշխատանքի վերլուծությունն այդքան էլ հստակ չէր: Նկատելի էր ժամանակի ոչ ճիշտ բաշխում և օգտագործում: Հնչած ոչ բոլոր հարցերին տրվեց պատասխան: Առաջադրված նապատակն իրագործվեց մասնակի բացթողումներով:	Աշխատանքը չգրավեց լսարանին: Հավաքված տեղեկությունը ճշգրտված չէր: Աշխատանքի ներկայացման ձևաչափը ճիշտ չէր ընտրված: Լսարանից հնչած հարցերին չտրվեց ամբողջական պատասխան: Նպատակն իրագործվեց մասնակի:
Միավոր			

Աղյուսակ 2-րդ. նախագծային աշխատանքի գնահատման նմուշ-օրինակ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախագծային մեթոդը, որը հիմնված է կոնկրետ խնդիրների լուծման և գիտելիքների ու հմտությունների գործնական կիրառման վրա, լրացնում է դասավանդման ավանդական մոտեցումները և սովորողներին հնարավորություն է տալիս ինքնուրույն ձեռք բերել և կիրառել գիտելիքներ:
- Հայոց լեզվի և գրականության դասերին նախագծային ուսուցումը խթանում է սովորողների անկախ և ստեղծագործ մտածողությունը՝ թույլ տալով նրանց ուսումնասիրել հետաքրքրություն առաջացնող և արդիական թեմաների մեջ:
- 7-րդ դասարանում Ակ. Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի վերաբերյալ նախագծային աշխատանքի օրինակը, որը հենվում է նոր չափորոշչի պահանջների վրա, ցույց է տալիս, թե ինչպես է հնարավոր նախագծային ուսուցման բոլոր փուլերի ճիշտ և հաջորդական իրականացման շնորհիվ ոչ միայն հասնել ստեղծագործության ըմբռնման և վերլուծության, այլև խրախուսել սովորողներին օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաներ և հետազոտական հմտություններ՝ ցուցադրելու գիտելիքների յուրացումը, քննադատական մտածողության, գիտելիքները ստեղծագործաբար ներկայացնելու կարողությունները և համագործակցային հմտությունները՝ ի վերջո բարձրացնելով ընդհանուր կրթական փորձը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ. Ալեքսանյան, Նախագծային ուսուցումը դպրոցում, https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-08/250032e4298979ea1707793b5739e7b7.pdf (հասանելի՝ 01.11.2023 թ.):
2. ՀՀ պետական առարկայական չափորոշիչ
3. Հ. Պետրոսյան, Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Ա հ., Երևան, 2012:
4. Սարգսյան Մարգարիտա, Նախագծային մեթոդ - ինքնարտահայտվելու հնարավորություն, https://dpir.mskh.am/hy/node/497 (հասանելի՝ 01.11.2023 թ.):